ԿԱՐԾԻՔ

Թ.00.01 - «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող

Գևորգ Գեղամի Հակոբյանի

«ՃՇՄԱՐԻՏԻ ՀԱԿՈՏՆՅԱ ՄՏԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ»

ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում քննարկվող հիմնախնդիրը հայ իրականության համար արդիական է և շատ կարևոր: Ատենախոսը անդրադառնում է հիմնախնդրի տեսամեթոդական ակունքներին, փիլիսոփայական արժևորումներին, ցուցաբերում է հեղինակային մոտեցում ճշմարտության երևույթը մեկնաբանելիս: Այդ երևույթի փիլիսոփայական իմաստավորման փորձերի սակավությունը մեզանում պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում դիտարկվում են ճշմարիտի էության սահմանման առանձնահատկությունները, ներկայացվում են ճշմարիտի հակոտնյա մտակառույցների վերաբերյալ տարբեր փիլիսոփայական մոտեցումներ:

Երկրորդ գլուխը փորձ է վերլուծելու ճշմարիտի հակոտնյաների դրսևորումները իրավաքաղաքական դիսկուրսում, փիլիսոփայորեն ըմբռնելու երևույթի տեղն ու դերը մեր իրականության համատեքստում: Մասնավորապես, ներկայացված են ճշմարիտի հակոտնյա մտակառույցների հեղինակային փիլիսոփայական իմաստավորումները:

Ատենախությունը կատարված է բարեխղճորեն և գրագետ, հատկապես արժեքավոր ենք համարում հեղինակի կողմից կիրառված մեթոդաբանական մոտեցումը՝ հիմնախնդիր/ ներքին ու հարակից խնդիրներ/ եզրակացություն եռամիասնական վերլուծական ընթացակարգը: Համանմանության, տրամաբանական և համեմատական մեթոդների համալիր կիրառումը հնարավորություն է տալիս հայտնաբերել հետազոտվող երևույթի առանձնահատկությունները, եզրակացնել, որ ճշմարիտի հակոտնյա մտակառույցները գործառում են մարդկային գործունեության բոլոր ոլորտներում:

Ատենախոսն այսպես է սահմանում «ճշմարտության» եզրույթը. «այն մտակառույցը, որի ճշմարիտ լինելն ինքնըստինքյան ու անհրաժեշտաբար պիտո է, անվանվում է *ճշմարտություն*» (էջ 21): Եվ այս սահմանումից ելնելով՝ նա ցույց է տալիս, որ եզրույթը ունի հակասական բնույթ:

Ատենախոսը հիմնավորում է այն թեզը, որ իրավաքաղաքական դիսկուրսում ճշմարիտի փոխարեն շատ հաճախ օգտագործվում են ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա մտակառույցները: Շատ կարևոր է այդ եզրակացությունը հատկապես Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքական գործընթացների և բյուրոկրատական վարչարարության համատեքստում: Այս հենքի վրա պետական կառավարման համակարգում առաջացել և տարածվում է «բյուրոկրատական տրամաբանություն», որը չի համապատասխանում մեր հասարակական կյանքի իրական մարտահրավերներին և խոչընդոտում է այդ կյանքի արդյունավետ կառավարմանը:

Ատենախոսության գիտական դրույթները և եզրահանգումները տեսականորեն հիմնավորված են և հետևողականորեն փաստարկված: Ատենախոսության գիտական արժեքը կարևորվում է ոչ միայն դուրս բերված եզրահանգումների հիմնավորվածության և հուսալիության տեսակետից, այլ նաև մեծածավալ նյութի մշակվածության առումով: Հեղինակն ուսումնասիրել է իրեն հասու լեզուներով հրատարակված մեծածավալ գրականություն և ենթարկել այն երկրորդային վերլուծության: Ատենախոսի կողմից ստացված գիտական արդյունքների

հիմնավորվածությունն ու հուսալիությունը հաստատում է տարբեր փիլիսոփայական ուղղվածություն ունեցող հայեցակարգերի, տեսական մշակումների և համաշխարհային համբավ ունեցող փիլիսոփաների (Ի. Կանտ, Հ. Արենդտ, Կ. Փոփեր) մեթոդաբանական մոտեցումների օգտագործումը: Նկատելի է նաև ռուս հեղինակների ազդեցությունը (Ն. Գուբանով, Ֆ. Սելիվանով):

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է տեսական և կիրառական բնույթի հետևյալ արդյունքներով՝

- Ատենախոսության մեջ ներկայացված են ճշմարիտի հակոտնյա մտակառույցների տեղերն ու դերերը ճանաչողության գործընթացում (էջ 59-83),
- Հեղինակին հաջողվել է առանձնացնել այն հիմնարար բնութագրիչները, որոնցով օժտված են ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա մտակառույցները,
- Ատենախոսը հիմնավորել է այն թեզը, որ «ճշմարիտի հակոտնյա մտակառույցները առաջանում և ամրակայվում են իրավաքաղաքական խոսույթում, երբ իրավաքաղաքական հարաբերությունների դերակատար կողմերից մեկը /կամ մի քանիսը/ ճշմարիտի հակոտնյայի մի կամայական կերպավորում է ներմուծում խոսույթ» (էջ 12):
- ճշմարիտի հակոտնյա մտակառույցների հեղինակի կողմից արված բացորոշումները կիրառելի են հայաստանյան իրավաքաղաքական գործընթացներում:

Հեղինակի ստացած արդյունքների գիտական նշանակությունն այն է, որ ատենախոսությունը կարող է կիրառվել որպես դասախոսական նյութ բուհերում փիլիսոփաների, իրավագետների, քաղաքագետների, հոգեբանների, հումանիտար ոլորտի մասնագետների պատրաստման համար:

Ատենախոսական աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից՝

- Ատենախոսը, քննելով ճշմարտության հիմնախնդիրը, նշում է, որ «ճշմարտությանն առնչվող քննարկումները դասակարգվում են մոտեցման երկու և/կամ երեք հարացուցային հիմքով (կորիսպոնդենտականը, կոհերենտականը, պրագմատիստականը)» (էջ 24): Սակայն կարելի է առանձնացնել շուրջ մեկ տասնյակ այլ մոտեցումներ (գործիքային, ինտուիտիվ, կոնսենսուային և այլն):
- Ատենախոսության 144-րդ էջում հայաստանյան քաղաքական ընտրանին ենթարկված է լուրջ քննադատության. «հայ հասարակության մեջ ճշմարիտի լեգիտիմացված մտակառույցների լինելիության և գործառության համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին օրվա քաղաքական ընտրանու համակարգային փոփոխություններում թույլ տրված թերությունների և բացթողումների պատճառով»: Սակայն չի նշվում որևէ թերության կամ բացթողման ոչ մի օրինակ:
- Հեղինակը, քննելով Ս. Հոքինգի գաղափարները (ի դեպ նույն էջում հայտնի գիտնականի ազգանունը գրված է երկու տարբեր ձևով), հակադրում է գիտությունը և փիլիսոփայությունը (էջ 122): Փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցողի համար այդպիսի մոտեցումը կարելի է համարել տարօրինակ մոտեցում:

Նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը: Կարելի է պնդել, որ այս ատենախոսությունը նվաճում է փիլիսոփայության բնագավառում:

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի ձեռքբերումները:

Եզրակացություն

Գևորգ Գեղամի Հակոբյանի «Ճշմարիտի հակոտնյա մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» Թ.00.01 - «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար պաշտպանության ներկայացված ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով արդիական թեմային: Թեկնածուական ատենախոսությունը ամբողջական և արդիական գիտական աշխատանք է և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի *ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի* պահանջներին:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Գևորգ Գեղամի Հակոբյանը արժանի է Թ.00.01 - «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան

«Ա.Ե.Մկրտիչյանի ստորագրությունը հաստատում եմ»:

Երևանի պետական համալսարանի գիտական

քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան

08.09.2023